կով, մեր ըմբռնումները հակիրճ ձեւակերպելով միայն:

Անդրկովկասի քաղաքական ճակատագրի մէջ դեր խաղացող արտաքին ուժերի մէջ առաջին եւ գլխաւոր տեղը գրաւում է, ի հարկէ, Ռուսաստանը: «Արտաքին ոյժ» ասելով էլ այստեղ հասկանում ենք դուրսի՝ ո՛չ անդրկովկասեան ազդակները, աշխարհագրօրէն հասկացուած: Այլապէս, Ռուսաստանը 18-րդ դարու վերջից սկսած արդէն՝ քաղաքական ներքին եւ միանգամայն վերին ազդակ է Անդրկովկասում: Գլխովին սխալ է այն դատողութիւնը, թէ հայերը եւ վրացիներն էին ռուսներին Անդրկովկաս բերողները, ընդդէմ մահմեդական տիրապետութեանց: Առաւել եւս անհիմն է այն կարծիքը, թէ հիւսիսի մեծ պետութիւնը կովկասեան լեռնաշղթայից հարաւ իջաւ՝ Պարսկաստանի եւ Տաճկաստանի կըրկնակ լուծերի տակ «տառապող եղբայրակից ժողովուրդներին ազատագրելու» փափաքով: Նոյնչափ կեղծ է նաեւ այն պնդումը՝ որպէս թէ մերօրեայ ռուսները, կարմրած եւ բոլշեւիկացած, Անդրկովկասի «յեղափոխական ժողովուրդներին» ձեռք մեկնելու համար երկրորդ անգամ Կուրի եւ Երասխի հովիտները իջան: Այսօր այլեւս ոչ ոք չի հաւատում ճերմակ ու կարմիր հէքեաթներին: Անդրկովկաս իջնելով ու երբեմն կրկին յետ բարձրանալով՝ Ռուսաստան միշտ էլ միա՛յն եւ միայն իր շահերով է առաջնորդուել: Հայերի ու վրացիների վերջին մարդն խակ կոտորելու պարագային՝ ռուսները մէկ քայլ անգամ առաջ պիտի չդնէին, եթէ այդ չբխէր սեփական շահերից. եւ ոչ էլ մէկ քայլ պիտի նահանջէին, եթէ ամէն անգամ հարկադրուած չլինէին անել այդ:

Եթէ հայերը եւ վրացիները ռուսական նուաճումների ճամբու վրայ մի դեր խաղացել են, այդ էլ եղել է կրաւորակա՛ն դեր միայն: Մեր ժողովուրդները պարզապէս գործիք են ծառայեցուել Ռուսաստանի տէրերի ձեռքին, նրանց աշխարհակալական նպատակներին դաղափարական դոյն տալու համար: Ռուս զօրավարները երբեք էլ հայերի ու վրացիների կամ ուրիշ ոչ ոչ ժողովուրդի կամքը չեն հարցրել, թէ ե՞րբ եւ արդեօք պիտի յառաջանա՞լ կամ նահանջել, ու մինչեւ ո՞ւր: Ռուսաստանը ի՛նքն է այդ որոշել ամէն անգամ, շատ յաճախ ոտքի կոխան անելով ոչ միայն մեր երկիրները, այլ եւ մեզ ազդովին մատնելով առաւելապէս իր խակ պատճառով մեզ հետ թշնամած մահմեդական ազգերի ձեռքը:

Ռուսաստանից դատ՝ վճռական դեր են խաղացել նաեւ արտաքին մրցակից ուժերը ու առաջին հերթին՝ Անգլիան: Եթէ այդպէս չլինէր, եթէ Ռուսաստանի ցանկութեանը մնացած լինէր, նա, դեռ 1829-ից սկսած, այսօր էլ Կարսում եւ Էրզրումում նստած կը լինէր ամուր: Կարճ՝ Անդրկովկասի ժողովուրդները ո՛չ թէ կողմ, այլ սոսկական առարկայ են եղած եւ են էլ՝ Ռուսաստանի եւ մերձաւոր ու հեռաւոր աշխարհակալ պետութիւնների ձեռքին: Այդ դիտակցում են նրանք այսօր, ու այդ գիտակցութեան ճամբին էլ աշխատում են կողմ դառնալ: Տարբեր խնդիր՝ որչա՛փ յաջողութեամբ:

Արդ, Անդրկովկասի մեր հարեւան երկիրները, Վրաստան եւ Ադրբէջան վճռել են ուղղակի առաջ երթալ: Միայն հակաբոլշեւիկ տարրերը չեն նրանցում, որ այդպէս են մտածում, այլ եւ շատ ու շատ համայնավար վրացիները եւ ադրբէջանցիներ, եթէ ո՛չ բոլորը: Որպէս առաջին հանդրուան դէպի այդ նպատակակէտը՝ այս վերջինները խորհում են լուծել Խորհրդային Անդրկովկասի միութիւնը եւ իրենց երկիրները դաշնակցային դեռնի վրայ անմիջապէս Խորհ. Միութեանը անդամակցիլ տալ: Ոչ-համայնավար վրացիք ու թաթարները կարիք էլ չեն զգում իրենց վերջնական նպատակները ծածկելու: Նրանք նպատակադրել են՝ իրենց երկիրների անջատումը Ռուսաստանից, աւելի շուտ վերականգնումը Վրաստանի եւ Ադրբէջանի անկախութեանց: Փարիզի մէջ հիմնուած «Կովկասեան ժողովուրդների միութեան» առաջադրած համադաշնակցութեան (կոնֆեդերացիայի) ծրագիրը դրա արդիւնքն է ահա: Այսպիսով, բոլշեւիկ եւ ոչ-բոլշեւիկ թաթարները մի տեսակ ներքին համաձայնութեամբ՝ լրացնում են իրար: Մէկ կողմը բացորոշ հակառուս եւ հակախորհրդային, միւս կողմը՝ «Խորհրդային օրիենտացիա» որդեգրած:

Հայաստանի եւ հայ ազգային քաղաքակա-